Աղքատություն

Ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ և ցանկանում է, որ դուք լինեք երջանիկ այսօր և ընդմիշտ: Նա խորհուրդներ և պատվիրաններ է տվել Իր մարգարեների միջոցով ձեզ օգնելու համար: Մի պատվիրան, որն էական նշանակություն ունի ձեր խաղաղության և երջանկության համար, դա սեռական մաքրության վերաբերյալ Նրա պատվիրանն է, որը հայտնի է որպես մաքրաբարոյության օրենք: Տերը հիմնել է այս օրենքը ամենասկզբից և Մարգարե Ջոզեֆ Սմիթին ասել է դրա կարևորության մասին՝ շեշտելով այն որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման մի մաս: Այս պատվիրանին հնազանդվելը նախապայման է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մկրտվելու համար:

Ի՞նչ է մաքրաբարոյության օրենքը:

Ամուսինների միջև ֆիզիկական մտերմությունը Իր զավակների համար Աստծո ծրագրի սքանչելի և սրբազան մասն է կազմում: Դա սիրո արտահայտումն է ամուսնության մեջ և թույլ է տալիս ամուսիններին մասնակցել կյանքի ստեղծմանը: Աստված պատվիրել է, որ այս սուրբ զորությունն արտահայտվի միայն այն տղամարդկանց և կանանց միջև, ովքեր օրինական ամուսնացած են: Մաքրաբարոյության օրենքը վերաբերում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց: Այն նշանակում է խստորեն զերծ մնալ սեռական հարաբերություններից նախքան ամուսնությունը և լիովին մաքուր ու հավատարիմ մնալ ամուսնության մեջ:

Մաքրաբարոյության օրենքը պահանջում է, որ տղամարդու և կնոջ միջև սեռական հարաբերությունները մնան ամուսնության սահմաններում:

Բացի նրանից, որ մենք պահում ենք ամուսնական կյանքի համար սեռական մտերմությունը, մենք հնազանդվում ենք մաքրաբարոյության օրենքին, վերահսկելով մեր մտքերը, խոսքերը և գործերը: Հիսուս Քրիստոսը սովորեցրել է. «Լսել եք, որ ասուեցավ առաջիններին, թե Շնություն մի՛ անիր: Բայց ես ասում եմ ձեզ, թե Ամեն ով որ մի կնկա վրա մտիկ տա նրան ցանկանալու համար նա արդեն շնացավ նրա հետ իր սրտի մեջ» (Մատթեոս Ե.27–28):



Ինչո՞ւ ես պետք է պահեմ մաքրաբարոյության օրենքը:

Ձեր Երկնային Հայրը տվել է մաքրաբարոյության օրենքը ձեզ պաշտպանելու և օրհնելու համար: Ինչպես բոլոր սուրբ բաները, ֆիզիկական մտերմությունը պետք է արտահայտվի ըստ Աստծո ցուցումի: Պահելով մաքրաբարոյության օրենքը, դուք կվայելեք երջանկություն, խաղաղություն և ինքնահարգանք: Դուք կվայելեք վստահություն ձեր ընտանեկան հարաբերություններում և կօրհնվեք ինքնատիրապետմամբ: Դուք կվայելեք Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները Սուրբ Հոգու ազդեցության միջոցով:

Ապրելով մաքրաբարոյության օրենքով, դուք.

- *Կհրավիրեք Սուրբ Հոգին ձեր կյանք:*
- *Կզարգացնեք ինքնահարգանք, ինքնատիրապետման միջոցով:*
- *Ավելի մեծ վստահություն կունենաք ձեր հարաբերությունների մեջ:*
- *Ավելի մեծ սեր կունենաք ձեզ շրջապատողների հանդեպ:*

Սատանան մարդկանց հավատացնում է, որ ամուսնությունից դուրս սեռական մտերմությունը ընդունելի է՝ անգամ ցանկալի: Սակայն դա լուրջ մեղք է: Աստված միշտ սովորեցրել է Իր զավակներին լինել առաքինի և ողջախոհ (տես Ելից Ի.14 և Ալմա 39.3–5): Այս սկզբունքը հավերժական է:

Մաքրաբարոյության օրենքի խախտումը Աստծո զորության չարաշահում է, որը տրվել է կյանք ստեղծելու համար: Այն ցույց է տալիս անարգանք

Նրա և Նրա զավակների հանդեպ: Այն նվազեցնում է հոգևորը և հաճախ տանում դեպի կսկիծ, ցավ, բաժանություն, հիվանդություն և արհեստական վիժման պատճառ հանդիսանում: Նրանք, ովքեր խախտում են այս օրենքը, ենթակա են դառնում սատանայի ավելի մեծ ազդեցությանը: Այս մեղքը նաև լրջորեն ազդում է ընտանիքի անդամների և մյուսների վրա:

> *«Թ՝ող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ»:*
>
> **ՎԿՈՒ 121.45**

Ինչպե՞ս ես պահեմ մաքրաբարոյության օրենքը:

Աստված իր զավակներից բարձր բարոյական չափանիշներ է պահանջում: Մաքրաբարոյության օրենքը պահելու համար դուք պետք է փոխարինեք անցանկալի մտքերը, խոսքերը և գործողությունները անաչառ մտքերով, խոսքերով և գործողություններով: Հետևյալ սկզբունքները օգտակար կլինեն.

Մտքեր: Դրական և կառուցողական մտքերը դուրս կհանեն ձեր կյանքից բացասական և անբարոյական մտքերը: Եթե դուք ձեր կյանքը լցնեք առողջ մտքերով և գործերով, բացասական մտքերը փոխարինելու և հաղթահարելու ձեր ունակությունը կաճի: Սուրբ գրություններ կարդալը, ձեր ընտանիքին ծառայելը, տքնաջան աշխատելը և առողջ զվարճալի զբաղմունքները կօգնեն ձեզ վերահսկել ձեր մտքերը:

Խուսափեք ամեն տեսակի պոռնոգրաֆիայից: Այն հակում առաջացնող և կործանարար է: Այն կցածրացնի ձեր ինքնահարգանքը և կյանքի գեղեցկությունների գնահատման աստիճանը: Թույլ մի տվեք, որ ձեր ուղեղը զբաղված լինի անվայել կամ անբարոյական մտքերով կամ պատկերներով: Մի դիտեք, կարդացեք, կամ ունկնդրեք որևէ բան, որը որևէ անպարկեշտ ձևով է պատկերում կամ նկարագրում մարդու մարմինը կամ սեռական պահվածքը: Խուսափեք ուրիշներին հեշտասեր մտքով նայելուց, և խուսափեք երկիմաստ կամ բացահայտ ֆիլմերից, հեռուստատեսային շոուներից, ինտերնետային էջերից, երաժշտությունից, գրքերից, ամսագրերից և միջոցառումներից:

Խոսքեր: Թող ձեր բառերը բարձրացնեն ուրիշներին և ամրացնեն նրանց: Վերացրեք ցածր, գռեհիկ և բացահայտ սեքսուալ բնույթ կրող բառերը, կատակները և թեմաները ձեր բառապաշարից:

Գործեր: Միշտ վերաբերվեք ուրիշներին հարգանքով: Եղեք համեստ ձեր հագուստի մեջ: Եթե հիշեք, որ յուրաքանչյուր անձ Աստծո զավակն է, և եթե դուք անեք ամեն ինչ, որպեսզի օգնեք ուրիշներին հետևել Նրա ծրագրին, ապա մաքրաբարոյության օրենքը պահելու ձեր ցանկությունը կմեծանա:

Այժմ վճռեք, որ դուք չեք անի ամուսնությունից դուրս որևէ բան, որը կարթնացնի ուժեղ զգացմունքներ, որոնք պետք է արտահայտվեն միայն ամուսնության

շրջանակներում: Մի՛ առաջացրեք նման զգացմունքներ մեկ այլ անձնավորության կամ ինքներդ ձեր մեջ: Մի՛ ներքաշվեք համասեռ բնույթ կրող գործողությունների մեջ կամ մի մասնակցեք անբարոյական բնույթ կրող միջոցառումներին: Այն միջոցառումները, որոնց մեջ ներգրավելով դուք կարող եք գայթակղվել և խախտել մաքրաբարոյության օրենքը, փոխարինեք կառուցողական և օգտակար գործողություններով և հետաքրքրություններով: Ամուսնության մեջ մտքով և գործով բացարձակ հավատարիմ մնացեք ձեր ամուսնուն:

Քանի որ մաքրաբարոյության օրենքը ձեզ ավելի կմոտեցնի Աստծուն, սատանան կփորձի համոզել ձեզ խախտել այդ պատվիրանը: Նա գիտի, երբ եք դուք միայնակ, շփոթված կամ ճնշված, և նա կփորձի ձեզ, երբ դուք թույլ եք: Աղոթեք ձեր Երկնային Հորը օգնության համար, և Նա ձեզ ուժ կտա դիմակայելու գայթակղությանը (տես Ա Գաղատացիս Ի.13): Եթե դուք ապավինեք Նրան և հետևեք այս սկզբունքներին, դուք կկարողանաք հաղթահարել գայթակղությունը:

Մաքրաբարոյության օրենքով ապրելու օրհնությունները

Ապրելով ըստ մաքրաբարոյության օրենքի դուք ավելի շատ ենթակա կլինեք Սուրբ Հոգու ազդեցությանը: Սուրբ Հոգու առաջնորդությամբ դուք կզարգացնեք ավելի մեծ իմաստություն, ավելի մեծ քաջությամբ կդիմակայեք փորձություններին,

Անկախ նրանից, թե ինչ եք դուք արել անցյալում, մեծ օրհնություններ կունենաք, եթե այժմ սկսեք ապրել մաքրաբարոյության օրենքով:

կզգաք Աստծո աջակցությունը և առաջնորդությունը ձեր կյանքում, և կլինեք օրինակ ձեր ընտանիքի և ուրիշների համար: Ձեր ամուսնու և հարազատների հանդեպ ունեցած ձեր սերը կլինի ավելի խորը, ավելի հագեցած և ավելի իմաստալից: Դուք կզգաք մտքի խաղաղություն:

Սուրբ գրություններից մենք սովորում ենք, որ իրական երջանկությունը գալիս է Աստծո պատվիրաններին հնազանդվելուց (տես Մոսիա 2.41) և որ «ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել» (Ալմա 41.10):

Եթե դուք խախտել եք մաքրաբարոյության օրենքը, Աստված հնարավորություն է ընձեռել ձեզ՝ ապաշխարելու և նորից մաքուր լինելու համար: Ապաշխարեք այժմ անցյալի բոլոր մեղսագործություններից և վճռեք ապրել ըստ այդ սուրբ օրենքի: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ և անկեղծ ապաշխարության միջոցով դուք կարող եք ներվել և խաղաղություն ունենալ:

Լրացուցիչ ուսումնասիրություն

Հետևյալ հարցերը և սուրբ գրությունները կօգնեն ձեզ ավելի շատ իմանալ այս գրքույկի սկզբունքների մասին: Սուրբ գրությունների տողատակի ծանոթագրությունները և խաչաձև հղումները ձեզ կուղղեն այս սկզբունքներին վերաբերող լրացուցիչ հատվածների և աղբյուրների:

Ի՞նչ է նշանակում պահել մաքրաբարոյության օրենքը: Ինչո՞ւ է այս օրենքն այդքան կարևոր:

Ելից Ի.14 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Առակաց Զ.27–32 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Տիտոս Բ.11–12 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ալմա 39.3–5 (Մորմոնի Գիրք, էջ 333)

3 Նեփի 12.27–30 (Մորմոնի Գիրք, էջ 485;
տես նաև Մատթեոս Ե.27—30, Նոր Կտակարան)

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» (Միսիոներները կամ Եկեղեցու որևէ անդամ կարող են օգնել ձեզ ձեռք բերել այս գրքույկի օրինակը, *Հավատքին հավատարիմ* և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկները: Դուք դրանք կարող եք գտնել նաև ինտերնետի www.mormon.org կայքում:)

«Մաքրաբարոյություն», *Հավատքին հավատարիմ*

Ինչպե՞ս ես կարող եմ ուժ գտնել մաքրաբարոյության օրենքը պահելու համար:

Ա Կորնթացիս Ժ.13 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Մոսիա 4.29–30 (Մորմոնի Գիրք, էջ 160)

Ալմա 38.12 (Մորմոնի Գիրք, էջ 332)

Երիտասարդներին զորացնելու համար գրքույկ

Ի՞նչ ես պետք է անեմ:

- Շարունակեք կարդալ Մորմոնի Գիրքը:
  Առաջարկվող ընթերցանություն: _____
  _____
- Ապրեք ըստ մաքրաբարոյության օրենքի: Աղոթեք օգնության համար, որպեսզի պահեք այս պատվիրանը:
- Այս կիրակի այցելեք եկեղեցի:
- Շարունակեք պատրաստվել մկրտությանը:
  Մկրտության ամսաթիվ. _____
- Այցելեք www.mormon.org ինտերնետային կայք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին ավելի շատ բան իմանալու համար:
- Շարունակեք հանդիպել միսիոներների հետ վերականգնված ավետարանի մասին ավելի շատ բան իմանալու համար:

  Հաջորդ հանդիպում. _____

  Միսիոներների անունները և հեռախոսի համարը.

  _____
  _____
  _____
  _____

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

www.mormon.org

Նկարներ
Առջևի կազմ՝ հատված *Լսեք Նրան*, Սայմոն Դյուի: © Simon Dewey
էջ 6, *Փրկիչը*, Դել Փարսոնի: © Del Parson
էջեր 2, 5, 9, 10, 13, Marina Lukach. © Marina Lukach

© 2007 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in the USA.
Անգլերենի հաստատումը. 2/06: Թարգմանության հաստատումը. 2/06: *Chastity*-ի թարգմանությունը.
Armenian

ARMENIAN
4 02011 39201 1
01139 201